ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.03.2012թ.
162-ի 8

Արտաշատի քաղաքապետ
պարոն Գագիկ Մուրադյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մուրադյան,

17.02.2012թ.-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էինք Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր քաղաքի բյուջեով 2011 եւ 2012 թվականների համար ինչքա՞ն գումար է նախատեսվել ձյան մաքրման աշխատանքների համար:
2. 2011թ. ինչքա՞ն գումար է հատկացվել Արտաշատ քաղաքի ձյան մաքրման աշխատանքների համար:
3. 2012թ. փետրվարի 15-ի դրությամբ ինչքա՞ն գումար է հատկացվել Արտաշատ քաղաքի ձյան մաքրման աշխատանքների համար:

Արտաշատի քաղաքապետարանից ստացված պատասխան գրությամբ, սակայն, տրամադրված էր միայն ձյան մաքրման աշխատանքների համար բյուջեով նախատեսված գումարների մասին տեղեկություն, իսկ հատկացված (ծախսված) գումարների մասին տեղեկությունը բացակայում էր:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք հայտնել, թե.

1. 2011թ. ինչքա՞ն գումար է հատկացվել Արտաշատ քաղաքի ձյան մաքրման աշխատանքների համար:
2. 2012թ. փետրվարի 15-ի դրությամբ ինչքա՞ն գումար է հատկացվել Արտաշատ քաղաքի ձյան մաքրման աշխատանքների համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան